

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ

Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք

**Հոդված 98. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների տեսակները**

1. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ են
  - 1) հոգեբույժի մոտ **հարկադիր** արտահիվանդանոցային հսկողությունը և հարկադիր բուժումը.
  - 2) հոգեբուժական **կազմակերպությունների կազմակերպության** ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժումը.
  - 3) հոգեբուժական **հիվանդանոցի կազմակերպության** հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժումը:
2. Մեղսունակությունը չբացառող հոգեկան խանգարման վիճակում կատարված հանցանքի համար դատապարտված, բայց ալկոհոլամոլությունից, թմրամոլությունից կամ թունամոլությունից կամ մեղսունակությունը չբացառող հոգեկան խանգարումներից բուժման կարիք ունեցող անձանց նկատմամբ դատարանը պատժի հետ մեկտեղ կարող է նշանակել հոգեբույժի մոտ **հարկադիր** արտահիվանդանոցային հսկողություն և հարկադիր բուժում:

**Հոդված 99. Հոգեբույժի մոտ հարկադիր արտահիվանդանոցային հսկողությունը և հարկադիր բուժումը**

Հոգեբույժի մոտ **հարկադիր** արտահիվանդանոցային հսկողություն և հարկադիր բուժում կարող է նշանակվել, եթե անձն իր հոգեկան վիճակով հոգեբուժական **հիվանդանոցում կազմակերպության** տեղավորման կարիք չունի:

**Հոդված 100. Հարկադիր բուժումը հոգեբուժական կազմակերպություններում կազմակերպությունում**

1. Հոգեբուժական **կազմակերպությունների կազմակերպության** ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում դատարանի որոշմամբ հարկադիր բուժում կարող է նշանակվել, եթե անձի հոգեկան խանգարման վիճակը պահանջում է բուժման, խնամքի և հսկողության այնպիսի պայմաններ, որոնք կարող են իրականացվել միայն **հիվանդանոցային ձևով**:
2. Հոգեբուժական **հիվանդանոցի կազմակերպության** հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում դատարանի որոշմամբ հարկադիր բուժում կարող է նշանակվել այն անձի նկատմամբ, որը հոգեկան վիճակով վտանգավոր է իր և այլ անձանց համար և պահանջում է մշտական հսկողություն **և բուժում**:

**Հոդված 101. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ նշանակելը, փոփոխելը և դադարեցնելը**

1. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոց նշանակելիս դատարանը հաշվի է առնում անձի հոգեկան հիվանդությունը, նրա կատարած արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը:
2. Անձի առողջանալու կամ նրա հիվանդության բնույթի այնպիսի փոփոխության դեպքում, երբ վերանում է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու անհրաժեշտությունը, դատարանը **բժշկական հաստատության եզրակացության հոգեբուժական կազմակերպության հոգեբուժական հանձնաժողովի եզրակացության** հիման վրա որոշում է կայացնում դրանց կիրառումը դադարեցնելու մասին:
3. **Բժշկական հաստատության եզրակացության հոգեբուժական կազմակերպության հոգեբուժական հանձնաժողովի եզրակացության** հիման վրա դատարանը կարող է որոշում կայացնել նաև բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոխելու մասին:

**Հոդված 102. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու ժամկետը հաշվակցելը**

Հանցանք կատարելուց հետո հոգեկան **խանգարմամբ հիվանդացած առողջության խնդիր ունեցող** անձի բուժվելու դեպքում պատիժ նշանակելիս կամ պատիժը կրելը վերականգնելիս նրա նկատմամբ հոգեբուժական կազմակերպությունում հարկադիր բուժում կիրառելու ժամկետը հաշվակցվում է պատժի ժամկետին՝ հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու մեկ օրը հաշվելով ազատազրկման մեկ օրվա դիմաց: